

- ավելացված արժեքի հարկի դրույքաչափը գրեթե բոլոր երկրներում դիֆերենցված է, և, որպես կանոն, գյուղատնտեսական և առաջին անհրաժեշտության մի շարք ապրանքներ հարկվում են արտոնյալ պայմաններով,
- գրեթե բոլոր զարգացած երկրներում, բացառությամբ Ֆրանսիայի, բյուջեի հարկային եկամուտներում գերակշիռ մաս են կազմում ուղղակի հարկերը,
- մի շարք երկրներում, օրինակ ԱՄՆ-ում, գործում է գերշահույթից հարկ, որը հնարավորություն է տալիս մեծացնել մրցակցությունը երկրի ներսում, թուլացնել որոշ ճյուղերում մենաշնորհային դրսևորումները, ինչպես նաև ապահովում է լրացուցիչ հարկային եկամուտներ,
- որոշ երկրներում, օրինակ Ճապոնիայում, մեծ լիազորություններ են տրված տեղական ինքնակառավարման մարմիններին, որը բավականաչափ թեթևացնում է պետական հարկային մարմնի աշխատանքները, նպաստում հարկման արդյունավետության բարձրացմանը:
- բոլոր զարգացած երկրներում քաղաքական և տնտեսական կառուցվածքային փոփոխություններին համապատասխան վերանայվում են հարկման մեխանիզմները և հարկային դրույքաչափերը, որը հնարավորություն է տալիս հարկատուին առկա սոցիալ-տնտեսական պայմաններին համահունչ որոշումներ կայացնել:

ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

ԵՊՀ ասպիրանտ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ՝ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ԲԱՑԱՍԱԿԱՆ ՍԱԼԴՈՅԻ ԱՃԻ ԶՈՒԳԱԿՑՄԱՄԲ

Վերջին տարիներին շատերին է մտահոգում այն հարցը, թե ինչու ներկայումս ՀՀ տնտեսությունում առկա երկնիշ տնտեսական աճը չի զուգակցվում արտաքին առևտրի, իսկ մասնավորապես արտահանման համարժեք ավելացմամբ, ավելին՝ 2006թ. սկսած ՀՀ արտահանումը՝ դրամային արտահայտությամբ, կրճատվում է: Տնտեսվարող սուբյեկտների մեծ մասի վկայությամբ դրա հիմնական պատճառը վերջին տարիներին ՀՀ տնտեսությունում գրանցվող դրամի շարունակական արժևորումն է, ինչն էլ հանգեցնում է ՀՀ արտահանման մրցունակության նվազման:

Տնտեսական աճը ապրանքների և ծառայությունների արտադրության աճն է որոշակի ժամանակահատվածում (որպես կանոն՝ 1 տարվա կտրվածքով): Տնտեսական աճը կարող է չափվել ինչպես ֆիզիկական արտահայտությամբ (տոննա, մետր և այլն), այնպես էլ՝ արժեքային: Առաջին մեթոդն ավելի հուսալի է, քանի որ թույլ է տալիս բացառել գնաճի ազդեցությունը, սակայն այս մեթոդը ունիվերսալ չէ, քանզի դժվար է տարբեր արտադրանքների համար հաշվարկել մեկ ընդհանուր ցուցանիշ: Այդ պատճառով էլ հիմնականում կիրառվում է հաշվարկման արժեքային մեթոդը, որում սակայն միշտ չէ, որ հնարավոր է ամբողջությամբ հաշվարկել գնաճի ազդեցությունը:

Տարբերում են տնտեսական աճի 2 տիպ՝ էքստենսիվ և ինտենսիվ. էքստենսիվ տնտեսական աճը հիմնված է արտադրության միջոցների քանակական աճի վրա (հիմնականում առկա է շինարարության ոլորտում), իսկ ինտենսիվը՝ արտադրողականության աճի և նոր տեխնոլո-

գիտնականի կիրառման վրա: Իրական կյանքում, սակայն, զուտ էքստենսիվ կամ ինտենսիվ տնտեսական աճ տեղի չի ունենում, առկա է դրանց համակցումը՝ որոշակի հարաբերակցությամբ:

Տնտեսական աճի վրա ազդող գործոնները բաժանվում են 2 խմբի՝ ուղղակի և անուղղակի: Ուղղակի գործոններն են՝ աշխատանքային ռեսուրսների որակը և քանակը, բնական ռեսուրսների որակը և քանակը, հիմնական կապիտալի ծավալը, արտադրության կազմակերպումը և տեխնոլոգիան, ձեռնարկատիրական ունակությունների զարգացման աստիճանը: Անուղղակի գործոններն են՝ հարկային քաղաքականության արդյունավետությունը, շուկայի մոնոպոլիզացիայի մակարդակի կրճատումը, վարկային համակարգի արդյունավետությունը, սպառողական, ներդրումային և պետական ծախսումների աճը, արտահանման աճը, արտադրական ռեսուրսների վերաբաշխման հնարավորությունը, եկամուտների բաշխման համակարգը:

Մակրոտնտեսական առումով տնտեսական աճի հիմնական ցուցանիշներն են՝ ՀՆԱ-ի աճի տեմպը և 1 շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի աճի տեմպը:

Բազմաթիվ տնտեսագետներ են փորձել բացատրել արտաքին առևտրի և տնտեսական աճի փոխկապվածությունը, մասնավորապես՝ Թադեուշ Ռիբչինսկին դիտարկում է ռեսուրսների ընդլայնմամբ պայմանավորված տնտեսական աճը և դրա ազդեցությունը արտաքին առևտրի վրա, Ջոն Հիկսը, Ռոյ Հարրոդը և Ռոբերտ Սոլոուն դիտարկել են տեխնոլոգիական առաջընթացի արդյունքում առաջացած տնտեսական աճի ազդեցությունը արտաքին առևտրի վրա:

ՀՆԱ-ի բաղադրիչներից մեկն էլ «Ձուտ արտահանումն» է, այսինքն՝ այլ հավասար պայմաններում ՀՆԱ-ի աճը պետք է բերի զուտ արտահանման համարժեք աճի և հակառակը: Սակայն գործնականում իրավիճակն այլ է:

Ներկայումս արտաքին շուկա դուրս գալու համար առավել կարևորվում են երկրի ոչ թե համեմատական, այլ մրցակցային առավելությունները: Մրցակցային առավելությունը, ի տարբերություն համեմատականի, կախված չէ ռեսուրսների առատությունից, գնից և տեղի նպատակահարմարությունից: Մրցակցային առավելությունն արդյունավետությունն է, որով այդ պաշարներն ու գործոնները վերածվում են արժեքի, և որով երկիրը, ընկերությունը կամ անհատը տարբերվում են իրենց մնամակիցներից: Փաստորեն, մրցունակությունն արդյունավետ և արտադրողական լինելու ունակությունն է:

Տնտեսության մրցունակությունն արտահայտվում է արտահանման շուկայի ընդլայնմամբ և իրականում հիմնված է բարձր արտադրողականության, արտադրանքի և սպասարկման որակի, ինչպես նաև նորամուծության միջոցով ավելացված մեծ արժեքի ստեղծման վրա: Ազգային արժեքները, մշակույթը, տնտեսության կառուցվածքը, պատմական զարգացման առանձնահատկություններն իրենց դերն ունեն երկրի մրցունակության ձեռքբերման գործում:

Մրցունակության բարձրացման խնդիրը լուծելիս պետք է շեշտադրումը կատարվի ոչ թե ողջ տնտեսության, այլ նրա առանձին ոլորտների և բնագավառների վրա: Այսինքն՝ այն առավելությունները, որոնց երկրները հասնում են միջազգային մակարդակով մրցակցելիս, առավելապես կենտրոնացնում են տնտեսության միայն որոշակի բնագավառներում:

Աղյուսակ 1

2000-2007թթ. ՀՀ տնտեսությունում ՀՆԱ-ի կառուցվածքը

	2000	2001	2002	2003	2004	2005	2006	2007
Արդյունաբերություն	22	22	22	22	22	22	18	16
Գյուղատնտեսություն	22	25	23	22	22	19	18	17.5
Շինարարություն	11	11	14	16	15	22	24.5	26
Տրանսպորտ	7	7	7	6	6	6	11.5	13
Առևտուր	9	10	10	10	11	11	18	17.5
Այլ ճյուղեր	31	25	24	24	24	20	10	10

ՀՀ-ում 2007թ. շարունակվեց վերջին 5 տարիների ընթացքում ձեռք բերված երկնիշ տնտեսական աճի միտումը: ՀՆԱ-ի արտադրությունը կազմել է 3139.4 մլրդ ՀՀ դրամ՝ 13.7%-ով գերազանցելով 2006թ. ցուցանիշը: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 2007թ. կազմել է 2844 դրամ, 2006թ. 1989-ի փոխարեն:

2007թ. աճ է արձանագրվել հետևյալ ոլորտներում՝ հանքարդյունաբերություն՝ 103.3%, մշակող արդյունաբերություն՝ 101.3%, էլեկտրաէներգիա, գազ, ջուր և բաշխման ոլորտ՝ 107.7%: Հարկ է նշել արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը սննդամթերքի՝ 107%, քիմիական՝ 119.2% (այս ոլորտում աճը հատկապես պայմանավորված է «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի հզորությունների ավելացմամբ և Վանաձորի «Պրոմեթեյ-Խիմպրոմ» ՓԲԸ-ի վերագործարկմամբ¹), ոչ մետաղական հանքային արտադրատեսակների՝ 120.4%, մետաղագործական արդյունաբերություն՝ 113.8% և այլն: Շարունակվում է ոսկերչական արտադրատեսակների արտադրության ծավալների անկումը՝ 52.6% (անկումը հիմնականում պայմանավորված է համաշխարհային շուկայում այս արտադրատեսակի պահանջարկի զգալի կրճատմամբ, մասամբ նաև՝ դրամի արժևորմամբ):

2007թ. ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը ընթացիկ գներով կազմել է 1506.5 մլրդ ՀՀ դրամ², աճի տեմպը նախորդ տարվա համեմատ՝ 139.7%, այդ թվում՝ արտահանումը՝ 394.2 մլրդ դրամ կամ 1152.3 մլն դոլար, աճի տեմպը՝ դոլարային արտահայտությամբ՝ 117%, ներմուծումը՝ 1112.3 մլրդ դրամ կամ 3267.8 մլն դոլար, աճի տեմպը՝ դոլարային արտահայտությամբ՝ 149.7%: ՀՆԱ-ի աճի տեմպը 2008 թ. հունվար-հոկտեմբերին 2007 թ. նույն ժամանակաշրջանի համեմատ հիմնական գներով կազմել է 107.2%, մինչդեռ արտահանման աճը դոլարային արտահայտությամբ 2008թ. հունվար-հոկտեմբերին 2007թ. նույն ժամանակաշրջանի համեմատ կազմել է 100.4%:

Աղյուսակ 2

2000-2007թթ. ՀՀ տնտեսությունում ՀՆԱ-ի և առևտրային հաշվեկշռի փոփոխությունները

	2000թ.	2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.	2005թ.	2006թ.	2007թ.	2008թ.՝ հունվար- հոկտեմբեր
Արտահանում՝ մլն ԱՄՆ դոլար	300.5	341.8	505.1	685.6	722.9	973.9	985.1	1152.3	941.2
Ներմուծում՝ մլն ԱՄՆ դոլար	884.7	877.3	987.2	1279.5	1350.7	1801.7	2191.6	3267.8	3579.2
Առևտրային հաշվեկշռի սալը	-584.2	-535.5	-482.1	-593.9	-627.8	-827.8	-1206.5	-2115.5	-2638
ՀՆԱ-ի աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, %	-	9.6	12.9	13.9	10.1	13.9	13.3	13.7	7.2

Սկսած 2002թ.-ից՝ ՀՆԱ-ի աճը դարձավ երկնիշ, իսկ առևտրային հաշվեկշռի բացասական սալը՝ խորացավ (աղյուսակ 2):

2008թ., սակայն, ՀՀ տնտեսության վիճակը նախորդ տարիների համեմատ այնքան էլ հաջող չէր. այս տարվա 10 ամիսների տնտեսական աճը կազմել է 7.2% (2007թ. հունվար-հոկտեմբեր՝ 13.6%): Այսինքն՝ այս տարի տնտեսական աճի տեմպը դանդաղել է մոտ 6 տոկոսային կետով: Զգալի էր անկումը վերջին տարիներին ավանդաբար բարձր աճ արձանագրած շինարարության և ծառայությունների ոլորտներում: Շինարարությունում աճը՝ 2007թ. համեմատ 1.6% էր՝ նախորդ տարիներին գրանցված 15-16%-ի փոխարեն, իսկ ծառայությունների ոլորտում աճը 13% էր՝ նախորդ տարիների 17-20%-ի փոխարեն: Արդյունաբերության աճը մոտ 3% էր:

¹ ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն, Հաշվետվություն 2007թ. գործունեության վերաբերյալ:

² ՀՀ ԱՎԾ, Տարեգրքեր 2006-2008թթ.:

Մակայն այս ամենին զուգահեռ առևտրային հաշվեկշռի բացասական սալը շարունակում է խորանալ. 2008թ. առաջին 10 ամիսների ընթացքում այն գերազանցեց նույնիսկ 2007թ. արտաքին առևտրի բացասական հաշվեկշռի 12 ամիսների մակարդակը՝ կազմելով 2638 մլն դոլար: Ընդ որում 2000-2005թթ. նկատվում էր ներմուծման և արտահանման հարաբերակցության կրճատում, այսինքն՝ ներմուծումն աճում էր ավելի դանդաղ տեմպերով, քան արտահանումը: 2005թ. առևտրային հաշվեկշռի բացասական հարաբերությունը 2000-2008թթ. ժամանակահատվածի համար հասավ նվազագույնին՝ ներմուծումը մոտ 1.85 անգամ ավել էր արտահանումից: 2006թ.-ից սկսած արտաքին առևտրի բացասական հաշվեկշռը սկսեց մեծանալ՝ զուգակցվելով, սակայն, ՀՆԱ-ի երկնիշ աճով: Այս երևույթն, ընդ որում ունի իր տրամաբանական բացատրությունը, որը չի հակասում և ոչ մի տնտեսագիտական տեսության. այսպես՝ եթե մինչև 2005թ. ՀՀ ներմուծման մեջ թանկարժեք և կիսաթանկարժեք քարերից հետո 2-րդ տեղում էր սնունդը (2004թ.՝ ողջ ներմուծման 21%-ը), ապա 2007թ. երկրորդ տեղում է հանքահումքային արտադրանքը՝ 15.8%, որին հաջորդում է մեքենաշինական արտադրանքը (ողջ ներմուծման 13.1%-ը), իսկ առաջին տեղում հագուստն է (20%): Կարելի է ենթադրել, որ հենց մեքենասարքավորումների և հանքահումքային արտադրանքի ներմուծման աճն էլ զգալիորեն նպաստել է տնտեսական աճին: Իսկ արտահանման մասին խոսելիս անհրաժեշտ է նշել, որ եթե 2005թ. արտահանման գրեթե 1/2-ը կազմում էր թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի արտահանումը, 2007թ. առաջին տեղում է ոչ թանկարժեք մետաղների արտահանումը, ինչը, իհարկե, պայմանավորված է համաշխարհային շուկայում վերջիններիս գնի բարձրացմամբ:

Համեմատելով ՀՀ տնտեսությունում արտադրանքի և սպառման աճը՝ անհրաժեշտ է փաստել, որ եթե մինչև 2000թ. սպառումը ավելին էր, քան ՀՆԱ-ն, ապա այսօր 14-15%-ով ՀՆԱ-ն է գերազանցում սպառմանը, այսինքն՝ այժմ արտադրում ենք ավելի շատ, քան սպառում ենք:

Թեպետ Հայաստանը արձանագրում է աննախադեպ տնտեսական աճ, և նույնիսկ Համաշխարհային բանկի փորձագետների կողմից մեր տնտեսությունը որակվել է որպես «Կովկասյան վագր», այնուամենայնիվ առկա են մտահոգություններ: Կան ախտանիշներ, որոնք ավելի խոսում են, քան «տնտեսական աճ» զուտ քանակական ցուցանիշը:

Այսօր ունենք ՀՆԱ-ի աճի մասով լավ քանակական արդյունք, ժամանակն է մտահոգվել նաև այդ աճի որակական կողմի մասին: Աղբյուրներ, Հայաստանը, Թուրքմենստանը և Չինաստանը այն երկրներն են, որ վերջին հինգ տարում իրենց տնտեսական աճով զարմացնում են աշխարհին: Եթե Աղբյուրն ու Թուրքմենստանը տնտեսական աճով պարտական են բնական պաշարներին, ապա նույն համեմատությունը Հայաստանի և Չինաստանի միջև չի խոսում ի օգուտ մեր երկրի: Հայաստանի տնտեսական աճը չունի որակական այն բնութագրիչները, ինչ Չինաստանը, Հայաստանի տնտեսական աճի գործոնները պայմանավորված չեն այնպիսի ոլորտներով և ուղղություններով, որոնք բարձր կապահեին Հայաստանի մրցունակությունը միջազգային տնտեսության համատեքստում:

Այժմ անդրադառնանք այն փաստին, թե ինչպես է գնահատվել Հայաստանի մրցունակությունը տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից:

2007-2008թթ. մրցունակության համաշխարհային զեկույցում¹ ըստ Համաշխարհային մրցունակության ցուցիչի դասակարգման, Հայաստանը զբաղեցրել է 93-րդ տեղը 131 երկրների մեջ՝ հայտնվելով երկրների 8-րդ դեցիլում: Սա բավականին ցածր դիրք է, որը ցույց է տալիս, որ Հայաստանը դեռ բավականին շատ անելիքներ ունի համաշխարհային մակարդակով մրցունակ դառնալու համար:

Համաշխարհային մրցունակության ցուցիչում հաշվառվում են երկրի արտադրողականության և մրցունակության վրա ազդող 110 գործոններ, որոնց խմբավորումից ստացվում են 12

¹ Համաշխարհային տնտեսական ֆորում, «Մրցունակության համաշխարհային զեկույց», 2006-2007թթ. և 2007-2008թթ.:

խումբ գործոններ, իսկ վերջիններս էլ իրենց հերթին խմբավորվում են ըստ 3 խոշոր դասերի՝ «Հիմնական պահանջներ», «Արդյունավետության խթաններ», «Դնովագիաների և կատարելագործվածության գործոններ» (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

Մրցունակության չափանիշներ

Մրցունակություն	Դնովագիա - 94	«Դնովագիաների և կատարելագործվածության գործոններ» - տեղ՝ 103, -18՝ 2006/07 թթ. համեմատ
	Բիզնեսի կատարելագործվածություն - 111	
	Շուկայի չափ - 111	
	Տեխնոլոգիական կատարելագործվածություն - 104	«Արդյունավետության խթաններ» - տեղ՝ 101, -10՝ 2006/07 թթ. համեմատ
	Ֆինանսական շուկայի կատարելագործվածություն - 110	
	Աշխատուժի շուկայի արդյունավետություն - 40	
	Ապրանքների շուկայի արդյունավետություն - 104	
	Բարձրագույն կրթություն և վերապատրաստում - 95	«Հիմնական պահանջներ» - տեղ՝ 91, -14՝ 2006/07 թթ. համեմատ
	Առողջապահություն և տարրական կրթություն - 99	
	Մակրոտնտեսական կայունություն - 57	
	Ենթակառուցվածքներ - 87	
	Ինստիտուցիոնալ մեխանիզմ - 96	

Մրցունակության հետևյալ չափանիշներից ցանկացածի թույլ լինելը, բնականաբար, բացասաբար է անդրադառնում Հայաստանի մրցունակության վրա, ինչպես նաև նվազում է ներդրումների համար գրավչությունը ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա ներդրողների համար:

Այժմյան իրավիճակը, երբ գրանցվում է տնտեսական երկնիշ աճ, սակայն մրցունակությունը, ըստ Մրցունակության համաշխարհային զեկույցի, նվազում է, հավասարակշիռ և կայուն երևույթ չէ: Անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել նաև ՀՀ տնտեսության մրցունակության բարձրացմանը:

Մրցունակությունն, ի վերջո, բարեկեցություն է բերում երկրի քաղաքացիներին և կայուն հիմք է ստեղծում հետագա զարգացման համար: Այն տանում է կայուն տնտեսական զարգացման, շարքային քաղաքացիների բարեկեցության բարձրացման և աղքատության կրճատման: Մրցունակությունը միջոց է, որի շնորհիվ հասարակության բոլոր անդամները շահում են տնտեսական աճից:

Այսպիսով, որպեսզի ՀՀ-ում տնտեսական աճը նպաստի նաև արտաքին առևտրի, իսկ մասնավորապես արտահանման աճին, անհրաժեշտ է, որ ՀՀ տնտեսությունը լինի մրցունակ: Իսկ մրցունակ տնտեսություն ունենալու համար անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման է երկրում՝ գործարարության համար բարենպաստ միջավայրի առկայությունը, ինչն էլ կխթանի օտարերկրյա ներդրումների աճը, հետևաբար նաև՝ ՀՀ-ում միջազգայնորեն մրցունակ տեխնոլոգիաների ներդրումը: Միև սա է այն հիմնաքարը, որի միջոցով էլ հնարավոր կլինի զգալիորեն կրճատել ՀՀ արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը և հստակ երաշխիքներ ունենալ հետագա կայուն աճի համար: